ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Ջ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
էլ. փոստ՝ alaverdi.lori@mta.gov.am

N 197

21 փետրվար 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Նալբանդյան.

Ձեզ ենք ուղարկում Ալավերդի համայնքի ղեկավարի 2017թվականի N 85-Ա և N 86-Ա որոշումները:

Առդիր՝ 2 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Էվոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, +374 (253) 2 41 00, 2 46 00 (+374 (253) 2 46 00 (թեժ գիծ),
alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2017 թվականի N 85-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ, 42-րդ, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 02.02.2002թ. N 88 որոշումով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 10012017-06-0029 վկայականը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Սանահին կայարան թաղամաս, N 19/1 փոստային հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հասարակական նշանակության դպրոցի շենքի (վկայական N 10012017-06-0029) գործառնական նշանակությունը փոփոխել՝ որպես մանկապարտեզի շենք օգտագործելու համար:
2. Շինության գործառնական նշանակությունը փոփոխված է առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման, քանի որ կատարված շինարարական աշխատանքները, ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման համաձայն, դասակարգվում են շինարարական ցածր ռիսկայնության աստիճանի (գտնվում են շինարարական աշխատանքների ռիսկայնության առաջին գոտում), ուստի, միջնորմների փոփոխությունների արդյունքում կատարված ձևափոխությունները շինարարության թույլտվություն չեն պահանջում:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռիի մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

2017թ. փետրվարի 15
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, +374 (253) 2 41 00, 2 46 00 (+374 (253) 2 46 00 (թեժ գիծ),
alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2017 թվականի N 86-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ, 43-րդ, ՀՀ «Հողային օրենսգրքի» 3-րդ, 7-րդ, 57-րդ, 59-րդ հոդվածներով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման 15-րդ կետով, ՀՀ կառավարության 09.08.2007թ. «ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N 1032-Ն որոշումով և հիմք ընդունելով Կարինե Էվոյանի դիմումը, հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի N 07112016-06-0016 վկայականը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի քաղաքի Թումանյան փողոց N 68 հասցեում գտնվող, 0.001456 հա մակերեսով (ծածկագիր 06-002-0796-0008)՝ Կարինե Էվոյանին սեփականության իրավունքով պատկանող, բնակավայրերի այլ հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես հասարակական կառուցապատման նշանակության՝ խանութ կառուցելու համար:
2. 10-օրյա ժամկետում տեղեկացնել անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմնին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:
3. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո այն ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՓԱՐԵՄՈՒՋՅԱՆ

2017թ. փետրվարի 17
ք. Ալավերդի